/ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ/
ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **Գործուղված անձինք**

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ՝ Ս. Մնացականյան

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

Ֆրանսիա/Փարիզ/26.06.-28.06.2019թ.

- **Նպատակը**

ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի 67-րդ հերթական լիակազմ նստաշրջան, ինչպես նաև նստաշրջանի ներքո "Տվյալների նոր աղբյուրներ, հասանելիությունն ու օգտագործումը" խորագրով ու "Ազգային վիճակագրական գրասենյակների նոր դերը՝ որպես վիճակագրության և տվյալների գրասենյակներ" խորագրով սեմինարներ

- **Քննարկված թեմաները**

Համաձայն Եվրոպական Վիճակագիրների Կոնֆերանսի և դրա Բյուրոյի աշխատանքները կառավարող կանոնների՝ Կոնֆերանսն ընտրում է իր Բյուրոն երկու տարի ժամկետով: Հայաստանը ի դեմս ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ՝ Ս. Մնացականյանի ընտրվել էր Բյուրոյի փոխնախագահ երկու տարի ժամկետով՝ 2015 թ. հունիսից 2017 թ. հունիսը և կրկին վերընտրվել էր 2017 թ. հունիսից 2019 թ. հունիսը: 2019 թ. հունիսի 28-ին Հայաստանը ի դեմս ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ՝ Ս. Մնացականյանի երրորդ անգամ վերընտրվել է Բյուրոյի փոխնախագահ երկու տարի ժամկետով՝ 2019 թ. հունիսից 2021 թ. հունիսը:

Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի 67-րդ հերթական լիակազմ նստաշրջանին ներկայացվեցին և քննարկվեցին հետևյալ թեմաները.

2019 թ. հունիսի 26-ին
Հարց 1. Բացման խոսքեր և օրակարգի ընդունում
Հարց 2. Սեմինար I. Տվյալների նոր աղբյուրներ, հասանելիությունն ու օգտագործումը
Հարց 2 ա. Նստաշրջան I. Մուտք դեպի տվյալների նոր աղբյուրներ
Ներածություն սեմինարի նախագահողի կողմից (ԱՄՆ)
Ներածություն նստաշրջանի նախագահողի կողմից (Շվեյցարիա)
Հիմնական ելույթ
Օժանդակության փաստաթղթերում բարձրացված խնդիրների ամփոփում
Քննարկում

Հարց 2 բ. Նստաշրջան II. Տվյալների նոր աղբյուրների օգտագործման համար անհրաժեշտ հմտություններ
Ներածություն նստաշրջանի նախագահողի կողմից (ԱՄՆ)
Օժանդակության փաստաթղթերում բարձրացված խնդիրների ամփոփում
Քննարկում
Նայելով առաջ
Առաջին նստաշրջանի արդյունքներն ու հիմնական ուղերձները
Երկրորդ նստաշրջանի արդյունքներն ու հիմնական ուղերձները
Մեկնաբանություններ և քննարկում
Նախագահողի եզրակացությունները դեպի առաջ ճանապարհի վերաբերյալ
Պաշտոնական աշխատանք
Հարց 3. Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի աշխատանքները կառավարող կանոնները
Հարց 4. Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի զեկույցները, ուղեցույցները և առաջարկությունները
Հարց 4 ա. Վտանգավոր դեպքերի և աղետների չափումը
Հարց 4 բ. Տարեց բնակչության չափումը հաստատություններում
Հարց 5. Կայուն զարգացման նպատակների վիճակագրություն
2019 թ. հունիսի 27-ին
Հարց 6. Սեմինար II. Ազգային վիճակագրական գրասենյակների նոր դերը՝ որպես վիճակագրության և տվյալների գրասենյակներ
Ներածություն սեմինարի նախագահի կողմից (Կանադա)
Հարց 6 ա. Նստաշրջան I. Տվյալների համակարգերի նոր հնարավորություններն ու խնդիրները
Ներածություն նստաշրջանի նախագահի կողմից (Միացյալ Թագավորություն)
Հիմնական ելույթ
Փաստաթղթերում սահմանված հիմնական խնդիրների ամփոփում
Պանելային քննարկում
Ընդհանուր քննարկում
Հարց 6 բ. Նստաշրջան II.Տվյալների համակարգի կառավարման մոտեցումները
Ներածություն նստաշրջանի նախագահի կողմից (Նոր Զելանդիա)
Փաստաթղթերում սահմանված հիմնական խնդիրների ամփոփում
Ընդհանուր քննարկում
Ընդհանուր քննարկում
Սեմինարի եզրակացություններ
Առաջին նստաշրջանի ամփոփում
Երկրորդ նստաշրջանի ամփոփում
Եզրակացություններն ու հաջորդ քայլերը
Պաշտոնական աշխատանք
Հարց 4. Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի զեկույցները, ուղեցույցները և առաջարկությունները (շարունակություն)
Հարց 4 գ.Առաջատար, բաղադրյալ և զգայուն ցուցանիշները
Հարց 4 դ. Սատելիտային հաշիվը կրթության և վերապատրաստման համար

Հարց 4 ե. Ռազմավարական հաղորդակցումների շրջանակ
Հարց 7. Պաշտոնական վիճակագրության մոդեռնիզացման բարձր մակարդակի խմբի աշխատանքները
Հարց 8. Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի 2020 թ. լիակազմ նստաշրջանում կազմակերպվելիք սեմինարների թեմաների ընտրություն
2019 թ. հունիսի 28-ին
Պաշտոնական աշխատանք
Հարց 4. Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի զեկույցները, ուղեցույցները և առաջարկությունները (շարունակություն)
Հարց 4 զ. Ռազմավարական գործընկերություններ
Հարց 9. Միջազգային վիճակագրական աշխատանքների համակարգումը ՄԱԿ-ի տնտեսական հանձնաժողովում Եվրոպայի տարածաշրջանի համար
Հարց 9 ա. Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի կողմից իրականացված խորացված վերանայումների արդյունքները
Հարց 10. Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի և ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի նստաշրջաններից ծագող հարցեր
Հարց 11. ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի վիճակագրական ծրագիրը
Հարց 11 ա. 2018 թ. ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի վիճակագրական ծրագրի իրականացումը
Հարց 11 բ. 2019 թ. ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի վիճակագրական ծրագիրն ու 2020 թ. աշխատանքային ծրագիրը
Հարց 11 գ. Ներուժի զարգացման առաջնահերթությունները Հարավ-արևելյան Եվրոպայում և Արևելյան Եվրոպայում, Կովկասում ու Կենտրոնական Ասիայում (ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի ծրագրի երկրներ)
Հարց 12. Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի ընտրություն
Հարց 9. Միջազգային վիճակագրական աշխատանքների համակարգումը ՄԱԿ-ի տնտեսական հանձնաժողովում Եվրոպայի տարածաշրջանի համար
Հարց 9 բ. Պաշտոնական վիճակագրության մեջ արբանյակային պատկերի և Երկրի դիտարկման տվյալների օգտագործումը
Հարց 13. Այլ հարցեր
Հարց 14. Զեկույցի ընդունում
Փակում:

2019թ. հունիսի 26-ին մասնակցել եմ Եվրոպական Վիճակագիրների Կոնֆերանսի (ԵՎԿ) Բյուրոյի նիստին որպես Բյուրոյի փոխնախագահ:
Բյուրոյին ներկայացվեցին և քննարկվեցին հետևյալ հարցերը.
I. Բացումը Մարջո Բրուունի (Ֆինլանդիա) կողմից
II. 2020 թ. ԵՎԿ սեմինարների թեմաների ընտրություն - *որոշման համար*
2020 թ. ԵՎԿ սեմինարների հնարավոր թեմաների ցանկը 2019 թ. մայիսին ուղարկվել էր բոլոր ԵՎԿ անդամներին՝ էլեկտրոնային խորհրդատվության համար:
ԵՎԿ Բյուրոն հրավիրեց ընտրելու 2020 թ. ԵՎԿ սեմինարի թեմաները՝ հիմնվելով Քարտուղարության կողմից առաջարկության վրա:
III. Ազգային հաշիվների կառավարող խումբ, արդիականացված տեխնիկական

առաջադրանք - *որոշման համար*

ԵՎԿ Բյուրոն ստեղծել է ՄԱԿ ԵՏՀ-ի Ազգային հաշիվների կառավարող խումբը՝ հետևելով ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի առաջարկությանը և կանոնավոր կերպով վերանայում է դրա մանդատն ու գործունեությունը:

Կառավարող խմբի խնդիրներից մեկն է կազմակերպել Ազգային հաշիվների վերաբերյալ ՄԱԿ ԵՏՀ-ի/Եվրոստատի/ՏՀԶԿ-ի միացյալ փորձագետների խմբի հանդիպումներ: 2018 թ. Կոնֆերանսը որոշեց, որ, հաշվի առնելով փորձագետների խմբի կողմից քննարկված խնդիրների կարևորությունը, և աշխատանքի շարունակականությունն ապահովելու նպատակով Ազգային հաշիվների փորձագիտական խումբը պետք է հատուկ հանդիպումից վերածվի մշտական մարմնի Կոնֆերանսի ներքո: Կոնֆերանսը խորհուրդ էր տվել ներկայացնել առաջարկությունը ՄԱԿ ԵՏՀ-ի Գործադիր կոմիտեին հաստատման համար:

Ներկայումս ՄԱԿ-ի զարգացման համակարգը (որը ներառում է ՄԱԿ ԵՏՀ-ը) ենթարկվում է բարեփոխման, ինչը կարող է ազդել աշխատելաոճի և միջկառավարական կառուցվածքի վրա: Ազգային հաշիվների վերաբերյալ մշտական մարմնի առաջարկության ներկայացումը ՄԱԿ ԵՏՀ-ի Գործադիր կոմիտեին ժամանակավորապես դադարեցվել է մինչև որ հստակեցվեն բարեփոխման արդյունքները: Հետևաբար, առաջարկվեց երկարաձգել Կառավարող խմբի մանդատը: Երբ ստեղծվի ազգային հաշիվների վերաբերյալ մշտական մարմին, Կառավարող խումբը կվերածվի Ազգային հաշիվների վերաբերյալ փորձագիտական խմբի բյուրոյի:

Բյուրոն հրավիրեց հաստատելու Ազգային հաշիվների վերաբերյալ Կառավարող խմբի արդիականացված տեխնիկական առաջադրանքը:

IV. Պաշտոնական վիճակագրության արժեքի չափման շրջանակը փորձարկելու և հետագայում զարգացնելու աշխատանքային խումբ, տեխնիկական առաջադրանք - որոշման համար

2017 թ. Կոնֆերանսը հաստատեց Պաշտոնական վիճակագրության արժեքի խթանման, չափման և հաղորդակցման վերաբերյալ առաջարկությունները: Դրանք վերջերս հրատարակվեցին անգլերենով, ֆրանսերենով և ռուսերենով:

Կոնֆերանսը հանձնարարել էր Քարտուղարությանը մեկնարկել պաշտոնական վիճակագրության արժեքի չափման շրջանակի պիլոտային փորձարկումը և հետևել արդյունքներին՝ շրջանակը հետագայում զարգացնելու համար: 26 երկիր, այդ թվում Հայաստանը, կամ գրասենյակ, ներառյալ տարածաշրջանից դուրս գտնվող մի շարք երկրներ ստորագրել են՝ շրջանակը պիլոտային փորձարկման ենթարկելու համար:

Բյուրոն հրավիրեց վերանայելու և հաստատելու Պաշտոնական վիճակագրության արժեքի չափման շրջանակը փորձարկելու և հետագայում զարգացնելու աշխատանքային խմբի տեխնիկական առաջադրանքը:

V. Հաջորդ հանդիպումների օրերն ու վայրը - *որոշման համար*

1. Բյուրոն հաստատեց Բյուրոյի հաջորդ հանդիպումների և ԵՎԿ հաջորդ լիակազմ նստաշրջանների օրերն ու վայրը:

2. 2019 թ. փետրվարի հանդիպմանը Բյուրոն որոշեց հետևյալը հաջորդ հանդիպումների վերաբերյալ.

- 2019 թ. հոկտեմբերի 16-17-ը (Ժնև)
- 2020 թ. փետրվարի 18-19-ը (Ժնև)

- 2020 թ. հոկտեմբերի 14-15-ը
- 2021 թ. փետրվարի 17-18-ը

ԵՎԿ 68-րդ լիակազմ նստաշրջանն առաջարկվեց անցկացնել Ժնևում՝ 2020 թ. հունիսի 22-ի շաբաթին՝ ՏՋՀԿ Վիճակագրության և վիճակագրական քաղաքականության կոմիտեի հանդիպմանն ու ՄԱԿ-ի Գլոբալ աշխարհատարածական տեղեկատվության կառավարման (ՄԱԿ ԳԱՏԿ Եվրոպա) լիակազմ նստաշրջանին հաջորդաբար, ինչպես որոշվել է ԵՎԿ 66-րդ լիակազմ նստաշրջանի կողմից:

69-րդ ԵՎԿ լիակազմ նստաշրջանն առաջարկվեց անցկացնել Փարիզում՝ 2021 թ. հունիսի 21-25-ը:

2019թ. հունիսի 26-ին մասնակցել եմ "Տվյալների նոր աղբյուրներ, հասանելիությունն ու օգտագործումը" խորագրով սեմինարին և հունիսի 27-ին՝ "Ազգային վիճակագրական գրասենյակների նոր դերը՝ որպես վիճակագրության և տվյալների գրասենյակներ" խորագրով սեմինարին և ունեցել եմ ելույթներ: Ելույթ եմ ունեցել նաև պաշտոնական աշխատանքի շրջանակում քննարկվող փաստաթղթերի վերաբերյալ: Մասնավորապես՝ «Պաշտոնական վիճակագրության մեջ արբանյակային պատկերի և երկրի դիտարկման տվյալների օգտագործումը» (հարց 9 բ) թեմատիկ քննարկման ընթացքում՝ կարևորելով Ավստրիայի վիճակագրության ղեկավարի առաջարկն առ այն, որ վիճակագրական գրասենյակները կարիք ունեն արբանյակային տվյալների մշակման գծով մասնագետների և նրանց ուսուցման, առաջարկել եմ, որ ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի տնօրեն պարոն Ստեփան Շվայնֆեստը նախաձեռնի փոքր երկրներին արբանյակային տվյալներից օգտվելու մուտքի հնարավորության հարցի քննարկումը ՄԱԿ-ի Գլխավոր Վեհաժողովում, ինչն արժանացավ պարոն Շվայնֆեստի հավանությանը և այդ առաջարկին միացավ նաև Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության վիճակագրության բաժնի տնօրեն տիկին Մարտին Դյուրանը:

- **Արդյունքները**

Մասնակցությունը նստաշրջանին և սեմինարներին հնարավորություն ընձեռեց ազգային վիճակագրական ծառայությունների ղեկավարներին քննարկելու և ծանոթանալու վիճակագրության տարբեր ոլորտների մշակման և վարման լավագույն փորձին, ուղեցույցներին, առաջարկություններին և վերջին զարգացումներին միտված ազգային վիճակագրությունների և դրանց միջազգային համադրելիության բարելավմանը:

- **Նշումներ**

Այցելության ծախսերը ֆինանսավորվել են ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի կողմից:

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ս. Մնացականյան